

ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՅ

Հրապարակվող նամակները Լեոն (Առաքել Բաբախանյան, 1860—1932) դրել է «Մշակ» թերթի հիմնադիր-խմբագիր Գրիգոր Արծրունուն (1845—1892), «Հանդես գրականական և պատմական» պարբերականի խմբագիր Մկրտիչ Բարխուդարյանին (1863—1927), մանկավարժ, Դևորգյան ճեմարանի տնօրէն Արիստակես Սեդրակյանին (1845—1906), «Մշակ» թերթի խմբագիր, գիտնական-գյուղատնտես Ալեքսանդր Քալանթարին (1855—1913), Դրանք բովանդակում են ուշագրավ փաստեր այդ մտավորականների կյանքի և գործունեության վերաբերյալ։

Նամակները պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Մ. Բարխուդարյանի ֆ., № 48—50, Դ. Արծրունու ֆ., № 556, Ա. Սեդրակյանի ֆ., ր. 1, № 15, էջ 167, 172, «Մշակ» թերթի ֆ., № 498)։

ՎԱՐԱՋԴԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

1

30 ապրիլի, 1890 թ.
Շուշի

Մեծապատիվ Գրիգոր Արծրունի

Այսօր, երբ տոնվում է Ձեր գրականության գործունեության քսան և հինգ ամյա հոբելյանը, երբ Դուք տեսնում եք Ձեր շուրջը խմբված Ձեր գործին ու խոսքին համակրողների և հավատացողների բազմությունը ամեն կողմից եկած բուռն ցանկություններով, Ձեզ վարձատրված եք համարում 25 տարի աշխատելուց, կովելուց հետո, թույլ տվեք ինձ ևս այս գավառական խուլ անկյունից երկու խոսքով ողջունել Ձեզ։ Ձեր ամբողջ գործունեությունը մեր սեփականությունն է դարձել և այսօր մենք բաղցրությամբ հիշում ենք, թե ինչ հանդես է տոնվում գրական աշխարհում։

Դուք էիք, հարգելի հոբելյար, որ մեր թմրած ու քնած գրականության մեջ մտքորիք ուղիղ և պարզ խոսքի ճաշակ, որ այսօր ամենքի ճաշակն է։ Թեև անպաճույճ և անարվեստ, բայց խիստ ազդու լեզվով բարոզեցիք սեր ղեպի ազգություն, դեպի մայրենի լեզուն։ Այդ լեզուն մոռացված էր, անարգված, Դուք այդ իսկ լեզվով լավ հասկացրիք մեզ, որ մենք մեռած կմնանք, մինչև որ մեզ չճանաչենք։ Դուք սարսափելի գույներով նկարագրեցիք մեռած ազգության պատկերը, հատկությունները և հարկադրեցիք մեզ ցնցվել, զգալ այն ամենը, ինչ հարկավոր է, որ չանհետանանք, չկորչենք։

Դուք էիք, անխոնջ մշակ, որ մեր գավառների վրա տարածված խավարի վերացրիք, լայն հրապարակ հանեցիք այդ խավարի տակ ծածկված կյանքը, ուսումնասիրեցիք և ուսումնասիրելու կարողություն տվիք։ Ժողովրդական կյանքը աչքի առաջ կանգնեց, տեսնելու ընդունակություն ունեցողը տեսավ շարն ու բարին, խրատ ու խրախույս ստացավ։

Դուք էիք, տաղանդավոր հրապարակախոս, որ կտրուկ սրով հարվածեցիք մեր մտավոր աշխարհի վրա բռնացած մոգերին՝ այն երկվյալ խավարամիտներին, որոնք գրելը, միտք բարոզելը իրենց սեփականություն էին համարում

վախեցնում էին ուրիշներին իրենց մոգական պաշտոնով: Իրանց սաստիկ մտատանջություն էր պատճառում մեր նորաբողոքոջ կյանքը, լույս ճշմարտություն գտնելու մեր տենչանքը: Այդ մոգերի կուռքը, որին երկրպագում էին օր ու գիշեր, շողոքորթություններ, կեղծավորություն և այս աշխարհի զորեղներին հաճոյանալու ու նրանց յուզալի պատառները վայելելու ախորժակն էր: Դուր զրանց ղեմ կատաղի պատերազմ հրատարակեցիք և հրապարակ հանեցիք անկողմնապահ՝ երիտասարդության, ժողովրդի մարդու ձայնը: Ազնիվ մտածող, բայց մոռացված հայր ճանաչեց իբ իրավունքը:

Դուք էիք, հարազատ հայ, որ անխնայ եռանդով բարոզեցիք եղբայրասիրություն, Դուք հայությունը <գիտեք> ոչ թե կրոնի, այլ սրտի զգացմունքի մեջ: Տաճկահայաստանի երկուերի ժամանակ փայլեց Ձեր մտքի և տաղանդի շնորհքը, այդ ժամանակը անմոռանալի կմնա Ձեր գործունեության ամբողջ շրջանում: Դուք ոգևորում էիք դարավոր քնի մեջ դիակնացած մի ժողովուրդ, որի կապանքները քիչ չէին պնդացնում միջնադարյան կույր հասկացողությունները կրոնի և ազգության մասին: Զանազան խտրություններ, ատելություններ ավելի ևս խոցոտում էին հիվանդ, անկար մարմինը, մխիթարություն պատճառելով նրա արտաքին թշնամիներին: Դուք այդ վերքերի սպեղանին հնարեցիք՝ ընդհանուր միության, եղբայրության արդար զաղափար:

Դուք էիք, անաչառ քննադատ, որ անխնա հարվածում էիք հայի բարոյականության վրա կուտակված բազմաթիվ կեղտերը: Դուք լինայեցիք մեծին, զորեղին, որովհետև շարիքը նրանցից էր սկսվում, նրանք էին եղած գրության տերը: Դուք լինայեցիք նաև թզուկներին, որոնք ցանկություն ունեին գողգոթա՝ ցույց տալու համար, թե իրանք էլ մի բան են: Այդ անաչառ, անխնա հարվածող ուղղությունը միշտ կապված կմնա Ձեր անվան հետ և մեծ մխիթարություն կպատճառե հարստահարված, հասարակ մահկանացուներին:

Դուք էիք, շնորհալի ղեկավար, որ հայոց գրականության ասպարեզը հանեցիք մի այնպիսի խոշոր տաղանդ, որպիսին էր հանգուցյալ Բաթթին: Նրան Դուք պաշտպանեցիք ամեն կողմից ցցած թունալից խայթոցներից, նրան՝ հայ աղբառ լեզվինակին, միջոց տվիք զարգանալու, մտքեր, գաղափարներ տարածելու հայ աշխարհում: Դուք էիք միայն, որ արձագանք էիք տալիս ամեն կողմից եկող բուռն և անկեղծ սրտին, որ հաստատվել էր ողբացյալ վիպասանի և ընթերցողի մեջ:

Դուք դեռ էլ շատ բաներ արիք 25 տարեկան ընթացքում:

Ձեզ հալածեցին, հայհույեցին, Ձեր թշնամիների բանակը ստվարացավ, կատաղի կրքի փրփուր հանեց, կուտեց: Դրանով ավելի ևս բարձրացավ Ձեր անունը, Ձեր նշանակությունը, Դուք թշնամական բանակի օրհասական ցույցերի առաջ ամենայն իրավունքով գրավեցիք պատմավոր տեղ մեր նոր գրականության պատմության մեջ:

Իբրև մի մարդ, որ Ձեր դրոշակի տակ սկսել է իր թույլ գրիչը գործածել, իբրև մի հայ, որին ոգևորել է Ձեր միտքը, ևս այսօր շնորհավորում եմ Ձեր 25-ամյա հոբելյանը: Շնորհավորում եմ Ձեր մտքի, գաղափարի հանդիսավոր հաղթությունը: Շնորհավորում եմ Ձեր 25-ամյա փշաղից ասպարեզը, որի վրա Դուք կանգնած եք անվախ գինվորի պես:

Շնորհավորում եմ Ձեզ, հարգելի Գրիգոր Աթոռունի, յուրաքանչյուր հային ծանոթ Ուխակօ լրագրի պատմական խմբագիր:

Դուր 25 տարվա փորձն ու պատրաստութիւնն ունիք: Իղեր այսուհետն էլ նույն Գրիգոր Լեւոնուհին, Էղեր նույն մարդը և նույն գործիչը և մեր սրտերը Զեզ հեն հն:

Առաւել Բաբախանյան

2

8 նոյեմբերի, 1890 թ.
Շուշի

Մեծազոյ բարեկամ*

Ստացա Զեր նամակը: Համաձայն եմ Զեր առաջարկած պայմաններին Գրութիւնս¹ հրատարակեցիք «Հանդեսում»² և արտատպեցիք առանձին գրքով: Տառերի մասին խնդրեմ ի նկատի առնել հետևյալը. եթէ գրքույկը «Հանդեսի» 32 երեսից ավել կլինի, եթէ շարված լինի № 12 տառերով, պետք է շարել № 10 տառով, իսկ եթէ № 10-ով 32 երեսից քիչ կընէ, պետք է շարել № 12-ով: Թուղթը պետք է լինի «Հանդեսի» 111 գրքի թղթից. տպագրեցիք 700 օրինակ, դիմը նշանակելով շատ էժան, բայց 10 կօպեկից ոչ էժան. ես կարծում եմ, որ եթէ 32 երես լինի, կարելի է 10 կօպ. նշանակել: Կարելի՞ չէր արդոք արտատպելիս փոքրացնել դիմը:

«Հանդեսի» դիմը տպած 32 երեսանոց տետրակը, իմ կարծիքով, տգեղ կլինի. եթէ կարելի է, խնդրեմ շինեցէք «Հանդեսի» մի երեսը կես արած ինչպես կլինի: Իհարկե, այս բանը պետք է կատարել առանց ծախսերի: Կազմի վրա խնդրեմ տպագրեք նամակիս հետ ուղարկած ցուցակը: Խնդրեմ հայտնեցեք, թե երբ կլինի գիրքը պատրաստ և տպագրութեան հաշիվը:

Վատ կլինի, եթէ Դուր ձեռք վերցնէք «Հանդեսի» հրատարակութիւնից: Գրութիւնն այնպես է, որ մայրաքաղաքներում անպատճառ պիտի հրատարակվեն այդպիսի հանդեսներ. եթէ ոչ, շատ բանիցից գրկված կմնանք կովկասյան գրաբնական պայմանների շնորհիվ: Բացի այդ մեծ առավելութիւնից, մեր պարբերական հրատարակութիւնները ուշ չունին լրացնել ընթերցանութեան պահանջը, ուստի հարկավոր են հրատարակութիւններ, որոնք ըստ չափու կարողութեան կշատացնեն ընթերցանութեան նյութը: Պետք է կարծել, որ «Հանդեսը» ավելի շատ բաժանորդ կունենա, հթէ աշխատողներ լինեն: Համենայն դեպս Զեր հրատարակութեան շարունակութիւնը ցանկալի է:

Մնամ ամենայն հարգանքով

Ա. Բաբախանյան

3

17 փետրվարի, 1891 թ.
Շուշի

Հարգելի բարեկամ**

Ստացա Զեր նամակը, նաև երկու օրինակ տպած գրքույկ: Շատ շնորհակալ եմ, և ըստ ամենայնի հավանում եմ տպագրութիւնը, միայն թե մի քանի

* Նամակն ուղղված է Մ. Բաբախանյանին:

** Նամակն ուղղված է Մ. Բաբախանյանին:

սխալներ կան, որ այնքան էլ նշանավոր չեն: Թույլատրություն ստանալուց հետո խնդրեմ իսկույն մի մի հատ ուղարկեք Թիֆլիսի հինգ հալ խմբագրություններին, հետո առանձին մի երկու հարյուր հատ ուղարկեք Թիֆլիս «Աղբյուրի» խմբագիր պ. Տիգրան Նաղարյանին, ես կխնդրեմ, որ նա վաճառելու ընդունե աղբյուր: Մնացածն, իհարկե, ինձ կուղարկեք, բայց չզիտեմ, թե ինչ կերպով պետք է ուղարկեք, որ թանկ չնստի. եթե տրանսպորտի կանստորով պիտի ուղարկեք, լավ կլինի, եթե մի հարյուր հատ էլ փոստով ուղարկեք ինձ—որովհետև տրանսպորտով չափազանց ուշ է հասնում, երկու ամսվա ընթացքում: Ձեզ եմ թողնում վճռել, թե ինչ կերպով պետք է ուղարկել. այսքանը կարող եմ ասել, որ փոստով ուղարկելիս ձեռնառու է բանտերոլով ուղարկել, էժան է նստում:

«Հայնդենի» համար անպատճառ վիպական գրվածք կուղարկեմ, միայն խնդրեմ իմաց տվեք. թե մինչև որ ժամանակը պետք է ուղարկեմ, ժամանակը իմանալը հարկավոր է:

Այսուհետև անելիք ծախքերը (փոստի և այլն) իմանալուց հետո կուղարկեմ Ձեզ ինձանից հասանելիք դրամը:

Մնամ խորին հարգանք

Առաքել Բաբախանյան

4

30 հունիսի, 1896 թ.

Թիֆլիս

Արբազան հայր*

Ձեր նամակն ստացա: Դժբախտաբար, մինչև այժմ չկարողացանք գտնել ուսուցիչներ: Ձեզ հայտնի է, որ մեր դպրոցական ասպարեզից հեռացել են բոլոր լավ ուժերը: «Մշակի» առաջիկա համարում կտպագրենք հայտարարություն, և այնուհետև դիմողների միջից կընտրենք այնպիսիներին, որոնք կհամապատասխանեն Ձեր առաջարկած պայմաններին: Մենք կամենում էինք առանց հայտարարության կատարել Ձեր հանձնարարությունը, ընտրելով ուսուցիչներ նրանցից, որոնք հայտնի կլինեն մեզ և պաշտոն որոնող: Բայց մինչև այժմ չկան այդպիսիները, ուստի հարկավոր պիտի լինի հայտարարությամբ հրավիրել: Հույս ունիմ, որ շուտով այս մասին տեղեկություններ կհասցնեմ Ձեզ:

Դպրոցական գործերի վերաբերմամբ այստեղ մի ժամանակ տարածվեցան ուրախալի լուրեր. ասում էին, թե Ձեզ հաջողվել է հասնել Ձեր առաքելության նպատակին: Բայց հետո տիրեց լուռություն, և մենք հասկացանք, որ այդ լուրերը անհիմն էին:

Թուրքիայից հասնող լուրերը հուսահատական են: Վանի կոտորածների մանրամասնությունները դեռ հայտնի չեն մեզ: Եկողները պատմում են, որ կոտորածների թիվը 4 հազար է: Կ. Պոլսի հայերը ստիպված են եղել դիմել պետությունների ներկայացուցիչներին և խնդրի, որ մի ճար լինի իրենց անտանելի դրության, որ ոչ մահ է, ոչ կյանք:

* Նամակն ուղղված է Ա. Սեդրակյանին:

Աշրգյանը¹ բացարձակ արշավանք է սկսել Իզմիրլյանի² դեմ. գործում է նա ոչ միայն իրեն հայտնի շրջաններում, այլև լրագրության մեջ («Փոփոխություններ»³), նրա խումբը աշխատում է մի ցույց կազմել պատրիարքի դեմ, որպեսզի խռովություններ հարուցանե և կառավարության ձեռքը միջամտության պատրվակ տա:

Ֆրանսիայում այժմ սկսվել է համակրություն դեպի հայերը: Բացի լրագրական հղովածներից, լինում են դասախոսություններ, նրատարակվում են գրքեր:

Արրահամ Ամիրխանյանցի⁴ կարգացած դասախոսությունը Բեռլինում մի շատ ազդու, խոր տպավորություն գործող բան է, զուցե մեզ հաջողվի տալ մի քանի կտոր այդ դասախոսությունից:

Ընդունեցեք, սրբազան հայր, իմ և խմբագրության անդամների բարեններ և խորին հարգանքները:

Ձեր բարձր սրբազանության խոնարհ ծառա Ա. Բարախանյան

5

30 հուլիսի, 1896 թ.

Քիֆիս

Արբազան հայր*

Հայտարարությունն էլ չօգնեց, մինչև այժմ միայն երկու ուսուցիչ հայտնեցին ցանկություն. մեկին Դուք ճանաչում եք—Եղիա Սուսանյանց, վերջին տարիներս ավագ ուսուցիչ Շուլավերում, մյուսը՝ մի ոմն Շովանես. եղել է անցյալ տարի Կաղզվանում: Պետք է ասել, որ դրանցից և ոչ մեկը կատարելապես զոհացուցիչ չէ, բայց մարդ չկա բոլորովին: Կային երկու լավ ուսուցիչներ, բայց նրանք պայմանները չափազանց անհարմար գտան. ռոճիկը շատ քիչ, ճանապարհածախսը շատ: Ես, իհարկե, չէի կարող ավելորդ խոստումներ անել: Բացի հայտարարությունն տպելուց ես անձամբ էլ հարցուսիրտ արի, բայց չգտա: Քիֆիսը այժմ առաջվա պես չէ, պաշտոն որոնող ուսուցիչներ չկան, ամենքը հուսահատված ստիպված բաշվել են այս ու այն կողմ, իրանց համար գործ են գտնում: Այնքան վատ վարվեցան նրանց հետ, որ այլևս շատ թեքի արժանավոր մարդը ստորություն է համարում ուսումնական գործով զբաղվել: Այս բոլորին իսկ շատ ուսուցիչներ դեռ չեն ստացել իրենց ռոճիկները, դիմում են էջմիածին, տեղից պատասխանում են, որ տեղական առաջնորդը պիտի այդ մասին որևէ միջոց առաջարկե, իսկ առաջնորդը չէ ընդունում ուսուցիչներին ասելով. թե ամառ է, ինքը հանգստանում է և ոչ մի գործ կատարել չէ կարելի: Այնպես որ, տեսնելով այս բանի աննպաստ հանգամանքները, ես չգիտեմ կարող պիտի լինի՞նք կատարել Ձեր հանձնարարությունը: Աշակցություն խոստացել է Հ. Մելլանցը¹, նա էլ այժմ այստեղ չէ, վերադառնալուց գուցե հեշտ լինի գտնել: Առայժմ գործը այսպիսի դրության մեջ է: Վերջնականապես կհաղորդեմ Ձեզ մի քանի օրից հետո:

Մնամ խորին հարգանքով՝ Ա. Բարախանյան

* Նամակ ուղղված է Ա. Սեդրակյանին:

Սիրելի Քալանթար

Ես դեկտեմբերի 16-ից հիվանդ եմ: Հիվանդությանս հետ ինձ պակաս չէ տանջում այն դրությունը, որի վրա ես շարունակ դարձրել եմ Ձեր և խմբագրության ուշադրությունը և տարաբախտաբար նկատի չի առնվել:

Ես միշտ ասել եմ, որ այս քրոնիկական հիվանդությունը ինձ թույլ չէ տալիս և չպիտի թույլ տա աշխատել այնպես, ինչպես հարկավոր է համարում խմբագրությունը, ուստի առաջարկել եմ, որ աշխատակցությունս լինի կամավոր և ոչ պարտադիր: Այս հանգամանքը մանավանդ այժմ, ներկա հիվանդությանս միջոցին, այնքան ծանր է ինձ համար, որ ես այլևս չեմ կարող լուել և հատկապես այս տողերը գրելու համար է, որ այսօր վերկացա տեղիցս:

Հիվանդությանս սկզբում բժ. Կարապետյանցը ինձ երկար հանդիմանեց, որ սխտեմատիկաբար չեմ բժշկվում և պայման դրեց, որ երկար ժամանակ (4—5 շաբաթ) տանից դուրս չգամ: Օրվա մի փոքրիկ մասն է նա ինձ թույլ տալիս, որ վերկենամ, ման գամ սենյակում, մնացած մասը պետք է պառկած լինեմ: Գտնում է, որ ինձ համար մաքուր օդը անպակաս նշանակություն ունի և թե տանից դուրս գալ չէ թողնում, հատկապես այն պատճառով է, որ խմբագրություն չգամ, որի օդից նա ուղղակի զարհուրում է: Թեև նա դեռ ինձ որոշակի չէ ասել, բայց պարզ երևում է, որ այս տարի պիտի ինձ գյուղ կամ գուցե և մի կուրորտ ուղարկել:

Մի կողմից այս: Իսկ մյուս կողմից այն, որ ես հաշվում եմ խմբագրության մեջ աշխատողներին մեկը, որ ես այդտեղ տեղ եմ բռնում, որ իմ պատճառով ավելի շատ պիտի աշխատեն ուրիշները՝ մանավանդ այն դժոխային պայմանների մեջ, որոնք ստեղծվել են «Մշակի» դիրքը մեծացնելուց հետո: Ինձ շարունակ տանջում է այդ հանգամանքը, ես հանգստություն չեմ կարողանում գտնել, աչքիս առջև ունենալով, որ ես իմ բռնած տեղով չեմ թույլ տալիս, որ խմբագրությունը կարողանա մի ուրիշ աշխատավոր բերել և եղած փոքրաթիվ աշխատողների դրությունը թեթևացնել:

Կրկնում եմ, ես շատ անգամ եմ հրավիրել Ձեր ուշադրությունը այս եղելության վրա: Ինձ առ այժմ նայելով, այն անոռոշ ասպագային, որ կանգնած է իմ առջև հիվանդությանս պատճառով, դրակսնապես հայտարարում եմ, որ հրաժարվում եմ իմ պաշտոնից և այլևս չեմ ընդունում պարտադիր աշխատակցության դրությունը: Թող խմբագրության մեջ աշխատող բնակիչները խղճան իրանց և իմ տեղը տան մի ուրիշին, որպեսզի թեթևացնեն իրանց ծանր, իսկապես անտանելի դրությունը:

Իսկ ինձ կմնա աշխատության մի այնպիսի եղանակ, որ համապատասխան կլինի իմ հիվանդության: Կգտնե՞մ արդյոք այդպիսի մի դրություն, ներկա բոլորից ինձ զբաղեցնողը դեռ այդ չէ: Բայց, համենայն դեպս, ես ինձ միանգամայն ազատ եմ համարում իմ վիճակը տնօրինելու մեջ:

Ընդունեցեք, հարգելի պ. Քալանթար, իմ խորին հարգանքները:

Ջեր Բարխանյան

ՄԱՆՈՒԽԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

1. Նկատի ունի «Մեր Մարկոսը» պատմվածքը:

2. «Հանդես գրականական և պատմական», կիսամյա, Մոսկվա, 1883—1896, խմբագիր և հրատարակիչ Մկրտիչ Բարխուդարյան:

4

1. Այրզյան—հոգևորական գործիչ, եղել է Կ. Պոլսի պատրիարք:

2. Իգմիրլյան Մատթեոս—հոգևորական գործիչ, եղել է Կ. Պոլսի պատրիարք, նրուսաղեմի ա. Հակոբ Միաբանության վանահայր, էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոս:

3. «Փունդ»—քաղաքական, գրական, ազգային շարաթաթերթ, Կ. Պոլս, 1860—1897, տնօրէն Ն. Ս. Ալանճյան:

4. Աբրահամ Ամիրխանյանց (1833—1913)—թարգմանիչ, մանկավարժ, հասարակական գործիչ: Մնվել է Շուշիում, քարձրագրույն կրթութիւնն է ստացել Շվեյցարիայում:

5

1. Հովսէփ Մելլան (1835—?)—հոգևորական, մանկավարժ, հասարակական գործիչ: